


**1.2.7. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ (սպառողական շուկա)**

**ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)**

	2003թ. հունվար-մարտ		%ով՝ ընդհանուր նկատմամբ	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2003թ. հունվար-մարտի նկատմամբ, %	2003թ. հունվար-մարտ	2002թ. հունվար-մարտ
<b>Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը</b>	<b>168656.1</b>	<b>110.1</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>
<i>այդ թվում.</i>				
մանրածախ ապրանքաշրջանառություն	124179.4	110.7	73.6	73.0
բնակչությանը մատուցված ծառայություններ	44476.7	109.3	26.4	27.0

**ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռներն ըստ եռամսյակների, 2003թ. հունվար-մարտին**  
 (%-ով՝ ընդհանուր նկատմամբ)




2003թ. հունվար-մարտին սպառողական շուկայի ընդհանուր ծավալում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները 2002թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշների նկատմամբ էական փոփոխություններ չեն կրել:

2003թ. հունվար-մարտին սպառողական շուկայի ծավալը 2002թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 110.1%, իսկ մարտին փետրվարի համեմատությամբ՝ 125.0%:

**Մանրածախ առևտուր**

2003թ. հունվար-մարտին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 124179.4 մլն. դրամ, որը 2002թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 10.7%-ով: 2003թ. մարտին փետրվարի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 126.1%:

**ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ֆիզիկական ծավալի ինդեքսները 2003թ. հունվար-մարտ 2002թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, համադրելի գներով, %**



**ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը**


	2003թ. հունվար-մարտ		Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռն ընդհանուրի նկատմամբ, %
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2002թ հունվար-մարտի նկատմամբ, համադրելի գներով, %	
Ընդամենը	124179.4	110.7	100
<i>այդ թվում՝</i>			
խանութներ	66655.4	116.5	53.7
հանրային սնունդ	1120.1	102.4	0.9
սպառողական ապրանքների շուկաներ	35067.7	112.1	28.2
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	5148.0	103.2	4.2
կրպակներ	16188.2	92.2	13.0

Բնակչության սպառողական պահանջարկը գլխավորապես բավարարվել է խանութների, սպառողական ապրանքների շուկաների և կրպակների միջոցով: 2003թ. հունվար-մարտին հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալի գերակշռող մասը՝ 94.9%-ը (117911.3 մլն.դրամ), ձևավորվել է վերջիններիս միջոցով: Այս միտումը բնորոշ է հանրապետության գրեթե բոլոր մարզերին:

**Խանութների, սպառողական ապրանքների շուկաների և կրպակների միջոցով իրականացվող առևտրի տեսակարար կշիռը մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում ըստ ՀՀ մարզերի, 2003թ. հունվար –մարտին**


	Ընդամենը ՀՀ	այդ թվում										
		ք.երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
Խանութների, սպառողական ապրանքների շուկաների և կրպակների ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	117911.3	100851.6	830.7	953.1	1684.8	963.8	2765.1	5119.8	2313.8	970.7	405.6	1052.3
այդ թվում ընդհանուրի նկատմամբ, %	94.9	96.6	95.5	95.1	76.2	81.1	84.7	98.1	69.9	89.0	97.6	85.2

**ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ֆիզիկական ծավալի ինդեքսները ( ըստ ձևավորման աղբյուրների) նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %**



**Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալն ըստ ձևավորման աղբյուրների, ՀՀ մարզերով, 2003թ հունվար-մարտին**

(%-ով՝ ընդհանուրի նկատմամբ)



**Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալների դինամիկան**

**ըստ ձևավորման աղբյուրների, 2003թ. հունվար-մարտին**

	Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում % ընդհանուրի նկատմամբ				
		խանութներ	հանրային սնունդ	սպառողական ապրանքների շուկաներ	գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	կրպակներ
Հունվար	38112.4	49.6	0.9	28.8	3.5	17.2
Հունվար-փետրվար	76276.7	49.0	0.9	28.7	4.6	16.8
Հունվար-մարտ	124179.4	53.7	0.9	28.2	4.2	13.0


**ՀՀ մանրածախ առևտրի գործող օբյեկտների քանակը և ապրանքաշրջանառության ծավալներն ըստ ՀՀ մարզերի, 2003թ. հունվար-մարտին**

	Ընդամենը		այդ թվում									
	գործող օբյեկտների քանակը, միավոր	ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	խանութներ		հանրային սնունդ		կրպակներ		գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ		սպառողական ապրանքների շուկաներ	
			քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ
<b>ք. Երևան</b>	<b>5532</b>	<b>104372.1</b>	<b>2412<sup>o</sup></b>	<b>57867.7</b>	<b>390</b>	<b>917.6</b>	<b>2700</b>	<b>11023.9</b>	<b>10</b>	<b>2602.9</b>	<b>20</b>	<b>31960</b>
Արագածոտն	197	869.7	77	618.0	12	10.6	101	149.5	4	28.4	3	63.2
Արարատ	600	1002.2	351	505.5	19	30.7	222	272.5	4	18.4	4	175.1
Արմավիր	415	2210.5	80	698.1	8	27.0	322	571.1	2	498.7	3	415.6
Գեղարքունիք	510	1189.1	245	426.3	7	7.8	247	256.4	3	217.5	8	281.1
Լոռի	994	3265.1	290	1281.1	29	23.2	667	800.0	4	476.8	4	684.0
Կոտայք	1222	5219.9	263	3101.0	23	38.8	922	1601.3	4	61.3	10	417.5
Շիրակ	690	3310.2	274	1170.4	34	41.3	378	772.2	2	955.1	2	371.2
Սյունիք	467	1090.6	195	475.0	22	12.2	245	380.0	3	107.7	2	115.7
Վայոց ձոր	166	415.4	68	193.6	12	6.9	84	140.7	1	2.9	1	71.3
Տավուշ	593	1234.6	198	318.7	13	4.0	378	220.6	2	178.3	2	513.0
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>11386</b>	<b>124179.4</b>	<b>4453</b>	<b>66655.4</b>	<b>569</b>	<b>1120.1</b>	<b>6266</b>	<b>16188.2</b>	<b>39</b>	<b>5148.0</b>	<b>59</b>	<b>35067.7</b>

ՀՀ մարզերին բնորոշ են ապրանքաշրջանառության տարբեր մակարդակներ: Երևան քաղաքի և ՀՀ մնացած մարզերի ապրանքաշրջանառության մակարդակների տարբերությունները հիմնականում պայմանավորված են առևտրի օբյեկտների քանակով, բնակչության թվաքանակով, ապրանքաշրջանառության կառուցվածքով, նյութատեխնիկական բազայի հագեցվածությամբ, ինչպես նաև բնակչության գնողունակ պահանջարկի մակարդակի տարբերություններով և արտաքին շուկաներին կապող կոմունիկացիաների տեղաբաշխմամբ:

**Ապրանքաշրջանառության ծավալների տեսակարար**


Կշիռներն ըստ մարզերի, 2003թ. հունվար-մարտին, %-ով՝ ընդհանուրի նկատմամբ



ՀՀ մանրածախ առևտրի ապրանքաշրջանառության ծավալի 84.0%-ը (104372.1 մլն.դրամ) ապահովել են ք.Երևանի մանրածախ առևտրի գործող օբյեկտները, որը բացատրվում է վերը նշված գործոններով և այն հանգամանքով, որ հանրապետության մի շարք մարզերի (հիմնականում ք.Երևանին մոտ գտնվող մարզերի) բնակչությունն ապրանքների ձեռքբերման պահանջարկի մի մասը բավարարում է նաև ք.Երևանի առևտրի օբյեկտներում:

ՀՀ մանրածախ առևտրում պահպանվել է խանութների միջոցով իրականացվող առևտրի գերակայության միտումը: Ընդ որում, 2003թ. հունվար-մարտին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի 53.7%-ը (66655.4 մլն.դրամ) ձևավորվել է խանութների միջոցով: 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ այդ ցուցանիշը, համադրելի գներով, կազմել է 116.5%: Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների, հանրապետությունում գործող խանութների 40.0%-ը մասնագիտացված է պարենային ապրանքների, 26.0%-ը՝ ոչ պարենային և 34.0 %-ը՝ խառը ապրանքների վաճառքով:

Խանութների քանակի բաշխվածությունը (պարենային, ոչ պարենային, խառը) 2003. հունվար-մարտին մարզերով, % ընդհանուրի նկատմամբ




**Խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2003թ. հունվար-մարտին**

	Խանութների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Մանրածախ ապրանքաշրջանառության փաստացի ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ, %
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>4453</b>	<b>14874</b>	<b>66655.4</b>	<b>100.0</b>
այդ թվում՝ մինչև 5 մարդ (գերփոքր)	3886	6883	16404.5	24.6
6-15 մարդ (փոքր)	447	3798	13233.8	19.9
16-30 մարդ (միջին)	86	1814	7659.4	11.5
31 և ավելի մարդ (խոշոր)	34	2379	29357.7	44.0

Վիճակագրական մոնիթորինգում ընդգրկված խանութների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր խանութները՝ 87.3%: Հարկ է նշել, որ դրանց ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 24.6%, այն դեպքում երբ խանութների ընդհանուր քանակում 0.8%-ը կազմող խոշոր խանութների միջոցով իրականացված ապրանքաշրջանառության ծավալը կազմել է՝ 44.0 %:

**Խանութների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2003թ. հունվար-մարտին, %**



**Խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, ՀՀ մարզերով, 2003թ. հունվար-մարտին**

	Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
ք. Երևան	57867.7	12008.2	20.8	11566.2	20.0	6557.5	11.3	27735.8	47.9
Արագածոտն	618.0	344.5	55.7	260.4	42.2	13.1	2.1	0.0	0.0
Արարատ	505.5	399.8	79.1	75.7	15.0	26.5	5.2	3.5	0.7
Արմավիր	698.1	428.1	61.3	87.2	12.5	165.2	23.7	17.6	2.5
Գեղարքունիք	426.3	366.8	86.0	37.0	8.7	22.5	5.3	0.0	0.0
Լոռի	1281.1	838.5	65.5	372.3	29.1	46.8	3.6	23.5	1.8
Կոտայք	3101.0	836.4	27.0	358.9	11.6	662.8	21.4	1242.9	40.0
Շիրակ	1170.4	501.3	42.8	235.7	20.1	104.6	9.0	328.8	28.1
Սյունիք	475.0	292.1	61.5	180.7	38.0	2.2	0.5	0.0	0.0
Վայոց ձոր	193.6	130.4	67.3	7.7	4.0	49.9	25.8	5.6	2.9
Տավուշ	318.7	258.4	81.1	52.0	16.3	8.3	2.6	0.0	0.0


	Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>66655.4</b>	<b>16404.5</b>	<b>24.6</b>	<b>13233.8</b>	<b>19.9</b>	<b>7659.4</b>	<b>11.5</b>	<b>29357.7</b>	<b>44.0</b>

Հանրային սննդի գործող օբյեկտների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2003թ. հունվար-մարտին

	Օբյեկտների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Մանրածախ ապրանքաշրջանառության փաստացի ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ, %
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>569</b>	<b>2600</b>	<b>1120.1</b>	<b>100.0</b>
<i>այդ թվում՝</i>				
մինչև 5 մարդ (գերփոքր)				
6-15 մարդ (փոքր)	469	1283	339.7	30.3
16-30 մարդ (միջին)	80	654	302.0	27.0
31 և ավելի մարդ (խոշոր)	12	247	132.4	11.8
	8	416	346.0	30.9

Վիճակագրական մոնիթորինգում ընդգրկված հանրային սննդի գործող օբյեկտների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքրերը՝ 82.4%, իսկ դրանց ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 30.3 %:

Հանրային սննդի գործող օբյեկտների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2003թ. հունվար-մարտին, %



Հանրային սննդի գործող օբյեկտների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, ՀՀ մարզերով, 2003թ. հունվար-մարտին

Մարզեր	Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
ք. Երևան	917.6	221.9	24.2	254.5	27.7	95.2	10.4	346.0	37.7
Արագածոտն	10.6	0.9	8.2	0.0	0.0	9.7	91.8	0.0	0.0
Արարատ	30.7	15.4	50.3	6.5	21.1	8.8	28.6	0.0	0.0
Արմավիր	27.0	12.1	44.8	14.9	55.2	0.0	0.0	0.0	0.0
Գեղարքունիք	7.8	7.8	100.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0

Մարզեր	Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
Լոռի	23.2	15.6	67.4	7.6	32.6	0.0	0.0	0.0	0.0
Կոտայք	38.8	21.4	55.1	17.4	44.9	0.0	0.0	0.0	0.0
Շիրակ	41.3	21.5	52.1	1.1	2.7	18.7	45.2	0.0	0.0
Սյունիք	12.2	12.2	100.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Վայոց ձոր	6.9	6.9	100.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Տավուշ	4.0	4.0	100.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>1120.1</b>	<b>339.7</b>	<b>30.3</b>	<b>302.0</b>	<b>27.0</b>	<b>132.4</b>	<b>11.8</b>	<b>346.0</b>	<b>30.9</b>

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2003թ. հունվար-մարտին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 35067.7 մլն. դրամ, որը 2002թ. համապատասխան ժամանակաշրջանի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, կազմել է 112.1%:


**ՀՀ սպառողական ապրանքների շուկաների քանակը և ապրանքաշրջանառության ծավալները ըստ մարզերի և ք. Երևանի, 2003թ. հունվար-մարտին**

Մարզեր	Շուկաների քանակը	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում %՝ ընդհանուրի նկատմամբ	
			պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	20	31960.0	12.7	87.3
Արագածոտն	3	63.2	-	100.0
Արարատ	4	175.1	15.5	84.5
Արմավիր	3	415.6	39.2	60.8
Գեղարքունիք	8	281.1	20.5	79.5
Լոռի	4	684.0	46.9	53.1
Կոտայք	10	417.5	13.6	86.4
Շիրակ	2	371.2	-	100.0
Սյունիք	2	115.7	1.4	98.6
Վայոց ձոր	1	71.3	-	100.0
Տավուշ	2	513.0	34.6	65.4
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>59</b>	<b>35067.7</b>	<b>13.9</b>	<b>86.1</b>

Հարկ է նշել, որ հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով: Մասնավորապես, 59 սպառողական ապրանքների շուկաներից 38-ը՝ ոչ պարենային ապրանքների վաճառքով մասնագիտացված շուկաներն են: Ընդ որում, ք. Երևանի 20 շուկաներից՝ 14-ը, Գեղարքունիքի մարզում 8-ից՝ 6-ը, Լոռու մարզում 4-ից՝ 3-ը, Կոտայքի մարզում՝ 10-ից 5-ը, Արագածոտնի, Շիրակի և Վայոց ձորի մարզերում գործող սպառողական ապրանքների շուկաները մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով: Դրանով է պայմանավորված հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալում ոչ պարենային ապրանքների ապրանքաշրջանառության մեծ տեսակարար կշիռը, որը կազմել է 86.1%:

**ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը 2003թ. հունվար-մարտին ըստ Երևան քաղաքի և մնացած մարզերի (ամփոփ)**

(% ընդհանուրի նկատմամբ)






**Սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2003թ. հունվար-մարտին**

	Շուկաների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Ապրանքաշրջանառության փաստացի ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ, %
<b>Ընդամենը ԳՀ</b>	<b>59</b>	<b>627</b>	<b>35067.7</b>	<b>100</b>
<i>այդ թվում՝</i>				
մինչև 5 մարդ (գերփոքր)	36	103	4455.1	12.7
6-15 մարդ (փոքր)	12	102	2977.6	8.5
16-30 մարդ (միջին)	5	98	1134.2	3.2
31 և ավելի մարդ (խոշոր)	6	324	26500.8	75.6

Սպառողական ապրանքների շուկաներում վարձակալական հիմունքներով առևտուր իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի թվաքանակը ունի հետևյալ բաշխվածությունը. գերփոքր՝ 1626, փոքր՝ 934, միջին՝ 524 և խոշոր՝ 3580 մարդ: Սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2003թ. հունվար-մարտին, %



**Սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, ԳՀ մարդերով, 2003թ. հունվար-մարտին**

56	Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	<i>այդ թվում՝</i>			
		մինչև 5 մարդ	6-15 մարդ	16-30 մարդ	31 և ավելի մարդ
«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար- մարտին»					

	Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		ծավալը, մլն. դրամ	%-ով՝ ընդամենի նկատմամբ	ծավալը, մլն. դրամ	%-ով՝ ընդամենի նկատմամբ	ծավալը, մլն. դրամ	%-ով՝ ընդամենի նկատմամբ	ծավալը, մլն. դրամ	%-ով՝ ընդամենի նկատմամբ
ք. Երևան	31960.0	2614.3	8.2	2427.9	7.6	417.0	1.3	26500.8	82.9
Արագածոտն	63.2	63.2	100.0	-	-	-	-	-	-
Արարատ	175.1	124.5	71.1	50.6	28.9	-	-	-	-
Արմավիր	415.6	-	-	229.7	55.3	185.9	44.7	-	-
Գեղարքունիք	281.1	120.9	43.0	63.4	22.5	96.8	34.5	-	-
Լոռի	684.0	231.4	33.8	77.3	11.3	375.3	54.9	-	-
Կոտայք	417.5	345.3	82.7	72.2	17.3	-	-	-	-
Շիրակ	371.2	371.2	100.0	-	-	-	-	-	-
Սյունիք	115.7	-	-	56.5	48.8	59.2	51.2	-	-
Վայոց ձոր	71.3	71.3	100.0	-	-	-	-	-	-
Տավուշ	513.0	513.0	100.0	-	-	-	-	-	-
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>35067.7</b>	<b>4455.1</b>	<b>12.7</b>	<b>2977.6</b>	<b>8.5</b>	<b>1134.2</b>	<b>3.2</b>	<b>26500.8</b>	<b>75.6</b>

**Մանրածախ շուկայի համեմատական ակտիվությունը ըստ մարզերի, 2002թ. հունվար-մարտին**

Մարզեր	Բնակչության թվաքանակը 2003թ. հունվար-մարտին (միջինը), հազ. մարդ	Ապրանքաշրջանառությունը 2003. հունվար-մարտին, մլն. դրամ	Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող ապրանքաշրջանառությունը, դրամ	Մեկ բնակչին ընկնող ապրանքաշրջանառությունը հանրապետության միջինի նկատմամբ, % <sup>1</sup>
ք. Երևան	1101.8	104372.1	94728.7	244.9
Արագածոտն	138.6	869.7	6274.9	16.2
Արարատ	272.2	1002.2	3681.9	9.5
Արմավիր	276.9	2210.5	7983.0	20.6
Գեղարքունիք	238.1	1189.1	4994.1	12.9
Լոռի	285.0	3265.1	11456.5	29.6
Կոտայք	272.6	5219.9	19148.6	49.5
Շիրակ	282.6	3310.2	11713.4	30.3
Սյունիք	152.8	1090.6	7137.4	18.5
Վայոց ձոր	55.9	415.4	7431.1	19.2
Տավուշ	134.3	1234.6	9192.9	23.8
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>3210.8</b>	<b>124179.4</b>	<b>38675.5</b>	<b>x</b>

2003թ. հունվար-մարտին պահպանվել է 2002թ. նույն ժամանակաշրջանում արձանագրված ք.Երևանի մանրածախ շուկայի գերակայության միտումը ՀՀ նյութ մարզերի նկատմամբ: Այսպես, ք.Երևանի մանրածախ շուկայի ծավալը 2003թ. հունվար-մարտին 2.4 անգամ գերազանցել է հանրապետական միջին ցուցանիշը: Մնացած մարզերի մանրածախ շուկայի տնտեսական ակտիվությունը հանրապետական միջինի նկատմամբ հիմնականում տատանվել է 9.5 – 30.3 % միջակայքում, բացառությամբ Կոտայքի մարզի՝ 49.5 %:

**2003թ. հունվար-մարտին ապրանքային պաշարների փոփոխությունը մանրածախ առևտրում և դրանց ապահովվածությունը օրերով**

Ամիսներ	Ապրանքային պաշարներ, մլն. դրամ	Ապրանքային պաշարների ապահովվածությունը օրերով
2003թ. հունվարի 1-ի դրությամբ	30500.8	35
Փետրվարի 1-ի դրությամբ	33643.0	71
Մարտի 1-ի դրությամբ	35234.1	67
Ապրիլի 1-ի դրությամբ	32951.3	52
Ի եռամսյակի միջինը	33534.4	57

<sup>1</sup> Այս ցուցանիշի մշակումը հնարավորություն կտա տարեկան կտրվածքով վարելու ըստ մարզերի, հետագայում նաև ըստ բնակավայրերի, շուկաների բնեացվածության (աճի կամ մարման) միտումների մոնիթորինգը:

2003թ. ապրիլի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները հանրապետության մանրածախ առևտրի գործող օբյեկտներում կազմել են 32951.3 մլն. դրամ, իսկ ապրանքային պաշարների ապահովվածությունը՝ 52 օր:

**Մանրածախ առևտրի գործող օբյեկտների ապրանքային պաշարները 2003թ. ապրիլի 1-ի դրությամբ և դրանց ապահովվածությունն (օրերով)**

	Ընդամենը ՀՀ	<i>ըստ մարզերի</i>										
		ք.երեվան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
Ապրանքային պաշարները, մլն. դրամ	32951.3	29008.0	85.3	358.5	220.7	277.7	648.4	1028.1	827.9	264.3	56.5	175.9
Ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով	52	51	13	76	86	64	83	42	69	65	30	84

Ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով հանրապետության միջինից բարձր է Արմավիրի (86 օր), Տավուշի (84 օր), Լոռու (83 օր), Արարատի (76 օր), Շիրակի (69 օր) և Սյունիքի (65 օր) մարզերում: Դա արդյունք է նշված մարզերում ապրանքների իրացման դանդաղ տեմպերին:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: 2003թ. հունվար-մարտին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 4.2%-ը կամ 5148.0 մլն. դրամը<sup>1</sup>:

<sup>1</sup> Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն: